Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2022-2023 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
10 – րդ դասարան

**1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ** 1միավոր

ա. ՀՀ գետային ցանցի խտությունը փոքր է հրաբխային լեռնավահանների և սարավանդների մարզում և ավելի մեծ՝ ծալքաբեկորավոր լեռների մարզում

բ. Սևանա լճի ավազանում տարեկան թափվող տեղումների քանակը ավելի շատ է քան Սյունիքի մարզում

գ. ՀՀ տարածքում առավելագույն տեղումների քանակը դիտվում է Թեժ լեռան գագաթին

դ. ՀՀ տարածքում ամենաքիչ տեղումները թափվում են Շիրակի դաշտի տարածքում

**2. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ** 1միավոր

ա. Չեխոսլովակիան դադարել է գոյությունը քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն փուլի երրորդ ենթափուլում

բ. Էրիթրեայի անկախացմամբ Եթովպիան զրկվեց դեպի համաշխարհային օվկիանոս անմիջական ելքից

գ. Ուզբեկստանը և Լիխտենշտայնը ունեն կրկնակի ներցամաքային դիրք

դ. Տարածքի մեծությամբ աշխարհում խոշորագույն էքսկլավը (կիսաէքսկլավը) Կալինինգրադի մարզն է

**3. Նկարագրով որոշել պետությունը** 1միավոր

Այս հանրապետությունը աշխարհի միակ «կղզային քաղաք-պետությունն է»՝ չնայած որ բաղկացած է 60-ից ավելի կղզիներից: Ներկայումս մարդկային զարգացման համաթվի ցուցանիշով աշխարհի ամենաբարեկեցիկ երկրներից մեկն է, իսկ իր աշխարհամասում, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ ցուցանիշով, արդեն երկար տարիներ առաջատար եռյակում է:

**4. Նշված եզրույթներից ո՞րը չի առնչվում քարոլորտի հետ** 1միավոր

ա. կարստ բ. աբլյացիա գ. ռիֆտ դ. պեդոսֆերա

**5. Ո՞ր օդային զանգվածն է տիրապետող (գրել միայն անունը).**

**ա.** հարավային կիսագնդի մերձարևադարձային գոտում հունիս-օգոստոս ժամանակահատվածում 1միավոր

**բ.** մերձանտարկտիկական գոտում դեկտեմբեր-փետրվար ժամանակահատվածում 1միավոր

**6. Խնդիրներ**

**ա.** Ա կետում դեկտեմբերի 22-ին արևի ճառագայթների անկման անկյունը եղել է նույնքան, որքան Երևանում մարտի 21-ին է լինում: Որո՞նք են այն աշխարհագրական լայնությունները, որոնց վրա կարող է գտնվել Ա կետը: 1միավոր

**բ.** Ճանապարհորդը հունիսի 22-ին մեկնել է մի կետից, որը Երևանի հետ նույն միջօրեականի վրա էր, սակայն կեսօրին ստվերներ չկային: Ո՞րն է ճանապարհորդի մեկնարկային կոորդինատները և քանի՞ կիլոմետր նա պետք է ճանապարհորդեր հյուսիսային ազիմուտով որպեսզի հասներ հյուսիսային բևեռային շրջագծին: 1միավոր

**7. Թվարկել**

**ա.** Որոտան գետի ավազանում չորս ջրամբար, որոնք սպասարկում են Որոտանի կասկադի էլեկտրկայաններին 1միավոր

**բ.** Եվրասիայի հիմքում գտնվող չորս պլատֆորմ 1միավոր

**8. Դասավորել**

**ա.** նշված քաղաքները ըստ տարվա ընթացքում ցերեկվա առավելագույն տևողության աճող հաջորդականության՝ Փարիզ, Կիտո, Նորիլսկ, Հռոմ 1միավոր

**բ.** նշված գետերը ըստ դրանց վրա Կորիոլիսի ուժի մեծության աճող հաջորդականության՝ Լիմպոպո, Ամազոն, Դանուբ, Յուկոն 1միավոր

**9. Բացատրել՝ հարցադրումներից յուրաքանչյուրի համար ներկայացնելով երկու պատճառ**

**ա.** Համաձայն վերջին տասնամյակներին դիտվող միտումների կանխատեսվում է, որ առաջիկայում նոր մեգաքաղաքներ (10մլն և ավելի բնակիչ) հիմնականում ի հայտ են գալու զարգացող երկրներում: Ինչո՞վ է պայմանավորված նման միտումը 1միավոր

**բ.** ԱՄՆ արևմտյան նահանգների բնակչության խտությունը հիմնականում ավելի փոքր է՝ համեմատած արևելյան նահանգների հետ: Ինչու՞ է այդպես 1միավոր

**10. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին**

Նկարում Աֆղանստանի բնակչության աճի դինամիկան է 1970-2021թթ. ժամանակահատվածում




**ա.** Ո՞ր տարեթվերին է բնակչության աճը եղել բացասական 0.5միավոր

**բ.** Ո՞րն է նման նվազմանը հանգեցրած գործոնը 0.5միավոր

**գ.** Բացատրեք նվազմանը հաջորդած թռիչքային աճի պատճառը 0.5միավոր

**դ.** Նշեք 2010-2021թթ. բնակչության աճի կայունացման 1 կարևոր պատճառ 0.5միավոր

**11. Բացատրել հասկացությունը և պատասխանել հարակից հարցերին**

**ա.** Ի՞նչ է կրակային երկրագործությունը (0.25միավոր): Որտե՞ղ է կրակային երկրագործության արդյունքում անապատացման ռիսկը ավելի մեծ. Սահելի՞ գոտում, թե՞ Ամազոնիայում (0.25միավոր) և ինչու՞ (0.5միավոր):

**բ.** Ի՞նչ է սուբուրբանիզացիան (0.25միավոր): Ո՞ր տիպի երկրներին է այս երևույթը ավելի բնորոշ՝ զարգացա՞ծ, թե՞ զարգացող (0.25միավոր) և ինչու՞ (0.5միավոր): 1միավոր

**12. Մեռատարիքային բուրգերը համապատասխանեցնել ժողովրդագրական անցման փուլերին (օր.՝ Ա- Փուլ5)** 2 միավոր







Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ.Ասատրյան